

Համբուրգի համալսարան
Իրավագիտության ֆակուլտետ
Լյուներերգ D-21335
ottolucht@arcor.de

Արցախի/Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության միջազգային իրավական հիմքերը

(1) Արցախի/Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունն ունի իր վճռորոշ միջազգային իրավական հիմքը՝ ըստ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքի: Դրա նկատմամբ հարգանքը և դրա իրացումը հստակորեն ճանաչվել է՝ որպես «Միավորված ազգերի կազմակերպության նպատակներից» մեկը (Հոդ. 1. թիվ 2; հոդ. 55, ՄԱԿ-ի կանոնադրություն): Այդ սկզբունքի իրավական բովանդակությունը որոշվում է Միավորված ազգերի կազմակերպության՝ քաղաքացիական և քաղաքական կամ տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների վերաբերյալ 1966 թ. դեկտեմբերի 16-ի՝ 1976 թվականին ուժի մեջ մտած երկու միջազգային համաձայնագրերի նույնականորեն ձևակերպված 1-ին հոդվածի 1-ին պարբերությամբ: Այն առկա է «բոլոր ժողովուրդների իրավունք»-ում՝ «ազատորեն և առանց արտաքին միջամտության որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը և ձևավորելու իրենց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացումը»: ՄԱԿ-ը 1970 թ-ին Բարեկամական հարաբերությունների հռչակագրի (հինգերորդ)՝ «Հավասար իրավունքների և ժողովուրդների ինքնորոշման» հիմնադրույթում¹ հետևյալ «հնարավորությունների» ճանաչմամբ որոշակիացրել է նաև քաղաքական կարգավիճակի վերաբերյալ ազատ որոշում կայացնելու իրավունքը. 1. Ինքնիշխան և անկախ պետության հիմնադրում: 2. Մի անկախ պետության հետ ազատ միավորում: 3. Ազատ ինտեգրում անկախ պետությանը: 4. Ժողովրդի կողմից ազատորեն որոշված մեկ այլ անկախ կարգավիճակի ընդունում:

¹ Փաստաթղթի ամբողջական վերնագիրն է՝ «ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն և (Բարեկամական հարաբերությունների հռչակագիր) ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 2625 (XXV) բանաձևով ընդունված՝ Բարեկամական հարաբերությունների և ամբողջ ու ներքին միջև համագործակցության մասին միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիր, 1970 թ. հոկտեմբերի 24»:

ժողովուրդների ինքնորոշման իրավունքն ունի «պարտադիր իրավունքի» որակ (iuscogens): Այդպիսով այն միջազգային իրավունքի ամենաբարձր մակարդակի նորմերից մեկն է: Պետությունների միջև կնքված այն պայմանագրերը, որոնք հակասում են այդ սկզբունքին, անվավեր են:

(2) Ժողովուրդների ինքնորոշման իրավունքի սկզբունքը, երբ խոսքը վերաբերում է մի ժողովրդի առանձնացմանը (Sezession) իր մայր պետությունից (parent state), իրավական լարվածության և կոնֆլիկտի մեջ է պետությունների ինքնիշխան հավասարության միջազգային իրավունքի սկզբունքի (Հոդ. 2 թիվ 1, ՄԱԿ-ի կանոնադրություն) և դրա հետ կապված՝ նրանց տարածքային ամբողջականության հետ (հմմտ. Հոդ. 2 թիվ 4, ՄԱԿ-ի կանոնադրություն): Երկու սկզբունքները՝ ինքնորոշման իրավունքը և պետությունների սուվերեն (ինքնիշխան) հավասարության սկզբունքը, կարող են, ըստ որոշակի քաղաքական հանգամանքների, տարբեր՝ ավելի մեծ կամ ավելի նվազ կշիռ ունենալ: Դա իրավական հետևանքներ է ունենում այն բանի վրա, թե երկու սկզբունքներից որն է գերակայում:

(3) Արցախի/Լեռնային Ղարաբաղի հայկական Հանրապետության դեպքում ինքնորոշման իրավունքը գերակայում է Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը, քանի որ հայերը, որոնք Արցախի/Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը դեռ Խորհրդային Միության ժամանակ են հիմնադրել, **առաջին**՝ իրացնում են «ժողովրդի» չափորոշիչները՝ ինքնորոշման իրավունքի իմաստով, և **երկրորդ**՝ նրանք կարող են իրենց համար պահանջել ինքնորոշման իրավունքի բարձրագույն ձևն ու աստիճանը, այսինքն՝ անջատումը Ադրբեջանի Հանրապետությունից և սեփական (ազգային) պետության ստեղծումը:

(4) Այն փաստի ընդունումը, որ Լեռնային Ղարաբաղի հայերը «ժողովրդի» ինքնորոշման իրավունքի իմաստով «ժողովրդի» հատկանիշը և որակը ունեն, **համոզիչ** կերպով արդեն իսկ հիմնավորված է նրանով, որ նրանք 1924 թ. Խորհրդային Ադրբեջանի հանրապետության մեջ ինքնավար մարզ են ստացել, քանի որ Խորհրդային Հայաստանի Հանրապետությանը սահմանակից «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում» հայերը մոտ 85 տոկոս բնակչությամբ կազմում էին բնակչության

ճնշող մեծամասնությունը: Լեոնային Ղարաբաղի հայերը մինչև ԽՍՀՄ-ի ավարտը չեն կորցրել, ազգային ինքնորոշման իմաստով, «ժողովրդի» որակը:

(5) Նախկին «Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզի» հայերն ունեին իրենց սեփական պետության ստեղծման իրավունքը, քանի որ նրանք, ըստ միջազգային իրավունքի, իրավունք ունեին անջատվել Խորհրդային Ադրբեջանի Հանրապետությունից և անջատումը հաջողությամբ իրականացրել են՝ միջազգային իրավունքին համապատասխան:

(6) Համաձայն ինքնորոշման միջազգային իրավունքի սկզբունքի՝ ժողովուրդն այն դեպքում իրավունք ունի անջատվելու, եթե այն, որպես էթնիկ խումբ, մայր պետության (parent state) կողմից այն աստիճան լուրջ խտրականության և ճնշման է ենթարկվում, որ ժողովրդի անդամներից այլևս չի կարող ակնկալվել քաղաքական հավատարմություն կառավարության հանդեպ և կեցություն ազգային առումով օտար մայր պետության մեջ: Այսպես կոչված՝ «փրկարար անջատումն» այսօր միջազգային իրավունքի կողմից ճանաչված իրավական ինստիտուտ է:² Այն ամենասերտ կերպով առնչվում է ՄԱԿ-ի՝ «պաշտպանելու պատասխանատվության» հայեցակարգին, որը փշրում է այն ավանդական պատկերացումը, թե պետությունն ու նրա ղեկավարները պետության ինքնիշխանության հիման վրա իրավունք ունեն կամայականորեն վարվել իրենց քաղաքացիների հետ:

(7) Հայերը Ադրբեջանի խորհրդային հանրապետությունում խտրականության և ճնշման այդ փորձառությունը ձեռք են բերել հատկապես ԽՍՀՄ-ի գոյության վերջին փուլում, երբ, խորհրդային պետական իրավունքին համապատասխան, փորձ ձեռնարկեցին խաղաղ և ժողովրդավարական քայլերով (զանգվածային խնդրագրեր, պառալմենտական որոշումներ, հանրաքվե) ԽՍՀՄ-ի կազմում իրացնել իրենց ինքնորոշման իրավունքը (1986-1991): Այդ ճանապարհին խոչընդոտվելով՝ Լեոնային

² «Փրկարար անջատումն» իրավական ինստիտուտը հիմնված է ՄԱԿ-ի կողմից «Բարեկամական հարաբերությունների հռչակագրում» հետևյալ կերպ որոշակիացված «Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի» 7-րդ պարբերության վրա. «Նախորդ պարբերություններում որևէ բան չպետք է այնպես մեկնաբանվի, թե թույլատրվում կամ խրախուսվում են այնպիսի միջոցառումներ, որոնք ամբողջովին կամ մասամբ ջլատում են այն ինքնիշխան և անկախ պետությունների տարածքային ամբողջականությունը կամ քաղաքական միասնությունը, **որոնք գործում են իրավահավասարության և ինքնագիտակցության սկզբունքին համապատասխան և, ըստ այդմ, այնպիսի կառավարություն ունեն, որը ներկայացնում է տարածքի ամբողջ ժողովրդին՝ անկախ ռասայի, հավատի և մաշկի գույնի տարբերության**»: Այն պետությունը, որն այս իրավական պայմանը չի կատարում, զրկվում է վնասված, նրան մինչ այդ ենթարկված ժողովրդին իշխելու իրավունքից:

Ղարաբաղի հայերը հարկադրված եղան, այժմ արդեն հենվելով միայն միջազգային իրավունքի վրա, իրենց ինքնորոշման իրավունքն իրացնել իր հերթին նոր միայն անկախ դարձած Ադրբեջանի Հանրապետության դեմ անկախության պատերազմով (1992-1994): Արցախի Հանրապետությանը դա միանգամայն հաջողվել է՝ Հայաստանի Հանրապետության և ընդհանուր հայ սփյուռքի աջակցությամբ: 1994 թ. մայիսի 11-ին Բիշքեկում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հետ կնքված՝ հրադադարի եռակողմ համաձայնագրով և այլ եռակողմ համաձայնագրերով Ադրբեջանի Հանրապետությունը միջազգային իրավունքին համապատասխան կերպով Լեռնային Ղարաբաղը ընդունեց՝ որպես պայմանագրային գործընկեր և հակամարտության մեջ՝ անկախ կողմ:

(8) Հայերի և Արցախի/Լեռնային Ղարաբաղի հանրապետության անջատման իրավունքը փրկարար անջատման հիմամբ ավելի ուժեղ է, քան Ադրբեջանի կողմից բարձրացված՝ սուվերենության (ինքնիշխանության) պահանջը, քանի որ 1992/1993 թվականներին, այսինքն՝ Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո Ադրբեջանի Հանրապետության ինքնիշխանությունը թույլ հիմքերի վրա էր: Երկրում տիրում էր քաղաքացիական պատերազմ հիշեցնող իրադրություն, իսկ հանրապետությունը դեռ միջազգային հանրության՝ լիովին կայացած ինքնիշխան անդամ չէր: Ի համեմատ Արցախի Հանրապետության կողմից իրացված ինքնորոշման իրավունքի, որի իրավական բաղադրիչները Լեռնային Ղարաբաղի հայերի կողմում առանձնապես ուժեղ և մնայուն են արտահայտված, Ադրբեջանի ինքնիշխանության պահանջը չափազանց թույլ կշիռ ուներ և ունի:

(9) Երբ Ադրբեջանի Հանրապետությունը 1994/1995 թվականներին վերջապես ամրապնդվեց՝ դառնալով լիարժեք ինքնիշխան պետություն և միջազգային իրավունքի սուբյեկտ, Արցախի Հանրապետությունը նրանից վաղուց առանձնացած էր: Այն 1994 թ-ի հրադադարային գծով («շփման գիծ») անցնող հստակ սահմանով Ադրբեջանի Հանրապետությունից վերջնականապես բաժանված էր և է, ունի սեփական՝ ժողովրդավարական ճանապարհով լեզիտիմացված և գործող պետական մարմիններ, ներառյալ սեփական՝ միջազգայնորեն ճանաչված ուժեղ բանակ և լիովին անկախ է Ադրբեջանի Հանրապետությունից:

(10) Արցախի/Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը թեև միջազգայնորեն ճանաչված չէ, սակայն համապատասխանում է դե ֆակտո-պետության բոլոր չափանիշներին և այդ պատճառով, համաձայն միջազգային իրավունքի տեսության, ունի միջազգային իրավունքի մասնակի սուբյեկտայնություն: Դրա ամենակարևոր հետևանքն այն է, որ Արցախի Հանրապետությունը, համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետի, ուժի կիրառման՝ համընդհանուր միջազգային իրավական արգելքով պաշտպանված է արտաքին հարձակումներից և դրա խախտման պարագայում (սկզբունքորեն այնպես, ինչպես Ադրբեջանի և Հայաստանի հանրապետությունները) կարող է օգտագործել ինքնապաշտպանության միջազգային իրավունքը (ՄԱԿ-ի կանոնադրության 51-րդ հոդված): Այդ իրավունքը, ինչպես մանրամասն պարզաբանված է կանոնադրության 51-րդ հոդվածի 1-ին պարբերությունում, կարող է գործադրվել ոչ միայն «անհատական» կերպով, այն է՝ սուկ Արցախի Հանրապետության կողմից, այլև «կոլեկտիվ» կերպով: Հայաստանի Հանրապետության կամ նաև Ռուսաստանի Դաշնության կողմից Արցախի/Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը ռազմական օգնության տրամադրումն այդ իսկ պատճառով, չի նշանակում միջազգային իրավունքի խախտում: